ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2025թ. թիվ 489

Ա. ԴԱԼԼԱՔՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԻԽԱՅԵԼՈՎԿԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի 2)-րդ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2025 թվականի օգոստոսի 21-ի թիվ 480-Ա որոշումը և հաշվի առնելով Ա.Դալլաքյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Աշխեն Վաչիկի Դալլաքյանին 2025 թվականի օգոստոսի 25-ից նշանակել «ՀՀ Լոռու մարզի Միխայելովկայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը և նրա հետ կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

2. Ա.Դալլաքյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

Recoverable Signature

Ստորագրող
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ
3905890216

X

2025-08-25 18:09:24 GMT+4
Հաստատված է ԷԿԵՄԿ-ի կողմից

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Signed by: AVETISYAN HOVHANNES 3905890216 Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

2025թ. օգոստոսի 25
ք.Վանաձոր